ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մանոմետրերի և դրանց միացման պարագաների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան 15 հուլիսի 2019 թ.

ժամը՝ 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատո Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

09.07.2019թ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Մասնակցից պահանջվել են ներկայացնելու առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

Հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը նույնպես ստացվել է հրավերով սահմանված ժամկետում:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 85 (ութսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ, որը չի գերազանցում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված շեմը:

Մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
2. Ընտրված մասնակից ճանաչել «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով:
3. Անգործության ժամկետ կիրառելի չէ:
4. Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:15-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան